ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի 2015թ. փետրվարի 26-ի նիստի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) նիստը գումարվեց 2015թ. փետրվարի 26-ին՝ ժամը 9:00-ին ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական շենքում: Նիստը վարում էր Հանձնաժողովի տարիքով ավագ անդամ, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ **ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ**:

Մասնակցում էին՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար,

ԱՐՄԱՆ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԸ՝ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահ,

ՌՈՒԲԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԸ՝ Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,

ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԸ՝ Մարդու իրավունքների պաշտպան,

ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԸ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ,

ՀՐԱՉԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԸ՝ «Հայաստանի Հանրապետության դատավորների միություն» հասարակական կազմակերպության նախագահ:

Որպես Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի ներկայացուցիչ՝ նիստն արձանագրում էր ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրինականության վերահսկողության տեսչության պետ **ՄԻՔԱՅԵԼ ՄԻՆԱՍՅԱՆԸ**:

Գ. Հարությունյանը Հանձնաժողովի հաստատմանը ներկայացրեց նիստի օրակարգային հետևյալ հարցը.

1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովին Մարդու իրավունքների եվրոպական

դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության մրցույթի հավակնորդ Վ. Գրիգորյանի կողմից 2015թ. փետրվարի 25-ին՝ ժամը 20:00-ին ներկայացված դիմումի ուսումնասիրության հարց:

Հանձնաժողովը միաձայն հավանություն տվեց նիստի օրակարգին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՈՐՈՇԵՑ.

Ոչ տեղին ու ոչ նպատակահարմար համարել կրկին անդրադարձը այն հարցերին, որոնք վերաբերում են 2014 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին առաջին մրցույթի անցկացմանը:

Միաժամանակ առաջարկել հանձնաժողովի անդամներին ձեռնպահ մնալ մրցույթի մասնակիցների վերաբերյալ որևէ ձևով հրապարակային անդրադարձերից՝ ղեկավարվելով բոլոր մասնակիցների նկատմամբ բացառապես հարգալից վերաբերմունքի դրսևորման սկզբունքով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ՝

Նիստը վարող՝ **ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ

ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Արձանագրող՝ ՄԻՔԱՅԵԼ ՄԻՆԱՍՅԱՆ